ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է՝

ԵՊԲՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 03.10.2018

ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 18-10-09-03 ՈՐՈՇՄԱՄԲ,

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 31.08.2026 ԹՎԱԿԱՆԻ

ԹԻՎ 26-09-08-01 ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՌԵԿՏՈՐ Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Օտարերկրացի դիմորդների ընդունելության մասին կանոնակարգը» կարգավորում է Համալսարանի բարձրագույն կրթության համակարգում օտարերկրացիների ընդունելության հետ կապված հարաբերություններ:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են. «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա պետությունում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության կարգը հաստատելու մասին» թիվ 700-Ն որոշումը, ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար

Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրությունը, սույն կանոնակարգը և այլ իրավական ակտեր:

3. «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ սույն կանոնակարգում «Օտարերկացի» եզրույթը տարածվում է այն անձանց վրա, ովքեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չեն և ունեն այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներ) կամ քաղաքացիություն չունեցող անձինք են:

4. Սույն կանոնակարգը չի տարածվում՝ Հայաստանի Հանրապետությունում միասնական ընդունելության կանոններով դիմող օտարերկրացի դիմորդների վրա:

5. Սույն կանոնակարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 2. Օտարերկրացի դիմորդների ընդունելությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Համալսարանի բարձրագույն կրթական ծրագրերով ընդունելությանը կարող են դիմել այն օտարերկրացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ստացել են առնվազն միջնակարգ կրթություն կամ արտերկրում՝ Հայաստանի Հանրապետության միջնակարգ կրթության մակարդակին համապատասխանող կրթություն և ունեն նշված կրթությունը հավաստող ավարտական փաստաթուղթ (ատեստատ, վկայական):

2. Համալսարանում մագիստրոսի կրթական ծրագրերով ընդունելությանը կարող են դիմել այն օտարերկրացիները, ովքեր ունեն առնվազն բակալավրի որակավորման աստիճան:

3. Օտարերկրացիների ընդունելությունը ամրագրվում է՝

1) Համալսարանի և դիմորդի միջև կնքվող «Կրթության մասին պայմանագրով»՝ վճարովի ուսուցման համակարգում՝ Համալսարանի «Ուսման վճարի չափերի մասին» կանոնակարգով սահմանված ուսման վճարների չափերին համապատասխան.

2) Համալսարանի և դիմորդի միջև կնքվող «Կրթության մասին պայմանագրով»՝ անվճար ուսուցման համակարգում՝ ՀՀ միջազգային պայմանագրերի համաձայն պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, պետության կողմից օտարերկրացիներին տրամադրվող տեղերի շրջանակներում.

3) Համալսարանի և դիմորդի միջև կնքվող «Կրթության մասին պայմանագրով»՝ ՀՀ Կառավարության կողմից սփյուռքահայերի ընդունելության համար տրամադրված

պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի սահմաններում:

4. Համալսարանի բարձրագույն կրթության բակալավրի, ինտեգրված կրթական ծրագրերով, կլինիկական օրդինատուրայի (ռեզիդենտուրայի) օտարերկրացի դիմորդների ընդունելությունն իրականացվում է դիմորդների փաստաթղթերի ուսումնասիրման և գիտելիքների ստուգման հիման վրա.

5. Համալսարանի բարձրագույն կրթության մագիստրոսի և ինտերնի կրթական ծրագրերով օտարերկրացի դիմորդների ընդունելությունն իրականացվում է փաստաթղթերի ուսումնասիրման հիման վրա՝ Համալսարանի կանոնակարգին համապատասխան:

Հոդված 3. Բակալավրի և ինտեգրված կրթական ծրագրերով օտարերկրացի դիմորդների գիտելիքների ստուգումը

1. Համալսարանում բարձրագույն կրթական ծրագրերով օտարերկրացի դիմորդների գիտելիքների ստուգումն իրականացվում է առկա քննությունների միջոցով՝ սույն կանոնակարգով սահմանված առարկաներից, հաշվի առնելով նաև սույն կանոնակարգով նախատեսված ընդունելության առանձնահատկությունները:

2. Համալսարանում օտարերկրացիների ընդունելության քննությունների կազմակերպման և պատշաճ անցկացման նպատակով Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում է ընդունելության հանձնաժողով և հանձնաժողովին կից աշխատանքային խումբ՝ դիմորդների հետ աշխատանքները համակարգելու համար:

3. Օտարերկրացի դիմորդների գիտելիքների ստուգումն իրականացվում է ՀՀ գործող միջնակարգ հանրակրթական ծրագրի շրջանակներում:

4. Օտարերկրացի դիմորդը պետք է հանձնի հետևյալ առարկաները.

1) հայերեն կամ ռուսերեն լեզուներով ուսուցման դեպքում՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներից իր ընտրությամբ երկուսը,

2) անգլերեն ուսուցման դեպքում՝ նախ «Անգլերեն լեզու», այնուհետև՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներից իր ընտրությամբ երկուսը:

5. Անգլերեն լեզվի գիտելիքների ստուգում չի իրականացվում, եթե օտարերկրացի դիմորդի միջնակարգ հանրակրթական ծրագրում սովորել է անգլրերեն լեզվող կամ ամփոփիչ ատեստավորման գնահատականն անգլերեն լեզվից 100 միավորի սանդղակում 75 և ավելի է, իսկ 200 միավորի սանդղակում՝ 150 և ավելի:

6. Անգլերեն լեզվի գիտելիքների ստուգումն իրականացվում է 50 թեստից կազմված թեստային առաջադրանքի միջոցով: Դրական արդյունք է համարվում 35 թեստերի ճիշտ լուծումը:

7. «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներից երկուսից գիտելիքների ստուգումն իրականացվում է յուրաքանչյուրը 50 թեստից բաղկացած թեստային առաջադրանքների միջոցով: Դրական արդյունք է համարվում յուրաքանչյուր առարկայից առնվազն 26 թեստերի ճիշտ լուծումը:

8. Առանձին դեպքերում, հաշվի առնելով օտարերկրացի դիմորդի պետության կողմից ընդունելությանը ներկայացվող պահանջների առանձնահատկությունները, գիտելիքների ստուգումը կազմակերպվում է երեք «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներից միաժամանակ:

9. Սույն հոդվածի 8-րդ կետով նախատեսված առանձին դեպքերում «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներից: Գիտելիքների ստուգումն իրականացվում է յուրաքանչյուր առարկայից 20 թեստից բաղկացած թեստային առաջադրանքների միջոցով մեկ քննությամբ: Դրական արդյունք է համարվում երեք առարկաներից միասին առնվազն 31 թեստերի ճիշտ լուծումը, սակայն յուրաքանչյուր առարկայից ոչ պակաս, քան 8 թեստի ճիշտ լուծումը:

10. Ընդունելության քննական թեստային առաջադրանքները «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներից կազմվում են Համալսարանի կողմից յուրաքանչյուր տարի հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով առնվազն 4 տարբերակով ՀՀ ԳԹԿ թեստային շտեմարանների հիման վրա:

11. Ելնելով օտարերկրյա դիմորդների աշխարհագրության ընդլայնման հեռանկարներից Համալսարանը կարող է օտարերկրյա դիմորդների գիտելիքների ստուգումն իրականացնել դիմորդների պետությունում, Համալսարանի կողմից որոշված տարածքում և նշանակված ներկայացուցչի կամ ներկայացուցիչների միջոցով:

12. Սույն հոդված 1-ին և 11-րդ կետերով չնախատեսված դեպքերում՝ միևնույն պետությունից մինչև 10 օտարերկրացի դիմորդների դեպքում Համալսարանը կարող է ուղիղ և (կամ) իր ներկայացուցչի միջոցով դիմորդների գիտելիքների ստուգումն իրականացնել առցանց եղանակով, հետևյալ կարգով.

1) Համալսարանը՝ քննության օրվանից 1 օր առաջ դիմորդի էլեկտրոնային փոստին է ուղարկում պատասխանների լրացման համար նախատեսված համապատասխան

«Քննաթերթիկը», որը դիմորդը պետք է տպագրի և քննության օրն ունենա թղթային ձևով:

2) Քննությունը պետք է կազմակերպվի Համալսարանի կողմից նշանակված օրը՝ առանձնացված մեկուսի սենյակում, Համալսարանի հետ հեռավար (օնլայն) տեսակապ ապահովող երկու սարքավորումով, որից մեկը պետք է տեղադրվի այն դիրքով, որն ուղիղ ցուցադրի դիմորդ(ներ)ին, իսկ մյուսը՝ պետք է ցուցադրի ամբողջ սենյակում այլ անձի կամ այլ սարքավորման բացակայությունը:

3) Համալսարանը՝ քննության մեկնարկին դիմորդի էլեկտրոնային փոստին է ուղարկում քննության «Թեստային հարցաշարը»:

4) Քննության օրը դիմորդը 1 ժամվա ընթացքում պետք է լրացնի քննաթերթիկը՝ հեռավար տեսակապի համար տեսանելի եղանակով և վերջում քննաթերթիկը ցուցադրի՝ ապահովելով բոլոր պատասխանների տեսանելիությունը:

5) Քննության ավարտին քննաթերթիկը անմիջապես պետք է սկանավորվի և ուղարկվի Համալսարանին:

6) Քննության ամբողջ ընթացքը տեսաձայնագրվում է Համալսարանի կողմից:

7) Քննության ընթացքը վերահսկվում է Համալսարանի կողմից նշանակված հանձնաժողովի կողմից:

8) Քննության պատասխանը դիմորդին տրամադրվում է քննության ավարտից հետո 3 ժամվա ընթացքում:

13. Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների և առկայության դեպքում նաև օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից առաջադրված պայմանների առկայությամբ, ինչպես նաև սույն կանոնակարգով նախատեսված գիտելիքների ստուգման արդյունքների հիման վրա դիմորդներն ընդունվում են Համալսարանի առաջին կուրս՝ համապատասխան բարձրագույն կրթական ծրագրով:

14. Գիտելիքների ստուգման արդյունքում սույն կանոնակարգով սահմանված պահանջները չհաղթահարելու դեպքում օտարերկրյա դիմորդն իրավունք ունի սովորելու Համալսարանի նախապատրաստական բաժնում:

15. Սույն կանոնակարգով նախատեսված ընդունելության քննությունների անցկացման ընթացակարգը, ինչպես նաև ընդունելության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը արտացոլվում է Համալսարանի պաշտոնական վեբ կայքի համապատասխան տեղեկատվական հարթակում:

Հոդված 4. Օտարերկրացի դիմորդների ընդունելության քննությունների անցկացման ընթացակարգ

1. Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն հայտ ներկայացնելուց հետո, օտարերկրացի դիմորդը Համալսարանի համապատասխան էլեկտրոնային հարթակում պետք է լրացնի հարցաթերթ, որի միջոցով հավաքագրվում են.

1) դիմորդի անձնական տվյալները,

2) դիմորդի անձնական էլեկտրոնային փոստի հասցեն,

3) Համալսարանի բարձրագույն կրթության ծրագիրը (ֆակուլտետը) կամ նախապատրաստական բաժնի կրթաձևը,

4) ուսուցման լեզուն՝ հայերեն կամ ռուսերեն կամ անգլերեն,

5) «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներից ընտրված 2 առարկաների անվանումները,

6) ԳԹԿ վկայագրի առկայության մասին նշում:

2. Քննությունների ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվությանը դիմորդը կարող է ծանոթանալ Համալսարանի պաշտոնական կայքի տեղեկատվական համապատասխան հարթակից:

3. Սահմանվում են քննությունների անցկացման և բողոքարկման ընդհանուր հետևյալ պահանջները՝

1) Քննության տևողությունը կազմում է 60 րոպե,

2) Առաջադրանքների քանակը կազմված է 50 թեստից,

3) Դրական անցողիկ շեմ է համարվում 26 թեստերի ճիշտ պատասխանը:

4) Քննությունների արդյունքները հրապարակվում է քննության ավարտից հետո առնվազն 3 ժամ անց:

5) Դիմորդն իրավունք ունի բողոքարկելու քննության արդյունքները՝ քննությունների արդյունքների հրապարակումից հետո 1 ժամվա ընթացքում:

6) Բողոքարկման գործընթացն իրականացվում է համապատասխանաբար «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաների քննական հանձնաժողովների կողմից:

7) Սույն կանոնակարգի 3 հոդվածի 11-րդ մասով նախատեսված օտարերկրացի դիմորդների բողոքարկման գործընթացն իրականացվում է հեռավար (օնլայն)

տարբերակով՝ համապատասխանաբար «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաների քննական հանձնաժողովների կողմից:

4. Քննության արդյունքները օտարերկրացի դիմորդներն իրավունք ունեն բողոքարկելու քննությունների արդյունքների հրապարակումից հետո 24 ժամվա ընթացքում:

Հոդված 5. Դիմորդի պարտականությունները և իրավունքները

1. Քննության օրը դիմորդը պետք է Համալսարան ներկայանա քննության մեկնարկից 30 րոպե առաջ:

2. Դիմորդն իր հետ պետք է ունենա անձը հաստատող փաստաթուղթ:

3. Քննության ժամանակ դիմորդն իրավունք ունի՝

1) սևագրության համար օգտագործել պատասխանների ձևաթղթի ետնամասը,

2) քննության պատասխանատուներից պահանջելու լրացուցիչ նշումների համար թերթիկ՝ անհրաժեշտության դեպքում,

3) քննության պատասխանատուներին տալ միայն տեխնիկական բնույթի հարցեր,

4) քննության ժամանակ օգտագործել մատիտ՝ նախնական պատասխանները նշելու համար՝ գրիչով ջնջումներից և ուղղումներից խուսափելու համար,

5) օգտագործել հաշվիչ՝ խնդիրների լուծման համար,

6) ունենալ «Մենդելեևի աղյուսակ»՝ քիմիա առարկայի քննության համար:

4. Քննության ժամանակ չի թույլատրվում՝

1) կատարել ջնջում և (կամ) ուղղում թեստերի պատասխանների համար նախատեսված ձևաթղթի վրա,

2) օգտագործել բջջային հեռախոս կամ տեխնիկական այլ միջոց,

3) հուշել այլ դիմորդի և խանգարել քննության ընթացքը:

5. Քննական պատասխանների ձևաթուղթը պետք է լրացված լինի.

1) կապույտ գրիչով (մատիտով գրված պատասխաններն առոչինչ են համարվում),

2) առանց ուղղումների և (կամ) ջնջումների (պատասխանի ուղղումն առոչինչ է համարվում).

3) ամբողջությամբ՝ բոլոր վանդակներում (բաց թողնված վանդակներով պատասխանների ձևաթուղթը չի ընդունվի):

* * *